ՀՏԴ 615.356:616-003.725:577.15
DOI:10.54503/0514-7484-2023-63.3-141

Սպառողների տեղեկացվածության մակարդակը կենսաակտիվ հավելումների վերաբերյալ

Ա.Վ.Նազարյան, Լ.Ա.Բարխուդարյան, Լ.Գ.Նազարյան, Ա.Բ.Բարսեղյան, Մ.Հ.Սիմոնյան

ԵՊԲՀ, դեղագործության կառավարման ամբիոն, կլինիկական օրդինատուրա 0025, Երևան, Կորյունի փ., 2

Բանալի բառեր. կենսաակտիվ հավելում, սննդային հավելում, վիտամիններ, սպառող

Ներկայումս կենսաակտիվ հավելումների սպառումը լայն տարածում է գտել ամբողջ աշխարհում: Կենսաակտիվ հավելումների (ԿԱՀ) համաշխարհային շուկան 2022 թվականի դրությամբ գնահատվել է 163 մլրդ 986 մլն ԱՄՆ դոլար և ակնկալվում է, որ 2023-ից մինչև 2030 թվականը տարեկան աճի միջին տեմպը կլինի 9,0% [5]: ԿԱՀ-երի պահանջարկն արագորեն աճում է ամբողջ աշխարհում, քանի որ մարդիկ կարծում են, որ ԿԱՀ-երի օգտագործումը կարող է կանխել ոչ վարակիչ հիվանդությունները (Noncommunicable diseases), ինչպիսիք են ճարպակալումը, շաքարախտը, սիրտ-անոթային և նյարդաբանական խանգարումները, ինչպես նաև կօգնի պահպանել առողջությունն ու բարեկեցությունը [5,8,19]:

ԿԱՀ-երի անվտանգության, որակի և արդյունավետության հետազոտությունների ժամանակ առաջացած գիտական և օրենսդրական բազմաթիվ խնդիրներ ընդհանուր են բոլոր երկրներում [7]: ԱՄՆ-ում ԿԱՀ-երի կարգավորումն իրականացվում է երկու հիմնական օրենքների հիման վրա՝ «Սննդային հավելումների առողջապահության և կրթության» օրենքի (Dietary Supplement Health and Education Act, 1994թ.) և «Սննդային հավելումներ և առանց դեղատոմսի դեղեր սպառողների պաշտպանության» օրենքի (Dietary Supplement and Nonprescription Drug Consumer Protection Act, 2006), որոնք փոփոխություններ են սննդի, դեղերի և կոսմետիկ միջոցների դաշնային օրենքում (Food, Drug, and Cosmetic Act), [4,14]: Ըստ ԱՄՆ-ի սննդամթերքի և դեղորայքի վարչության (Food and Drug Administration)՝ կենսաակտիվ հավելումները ներառում են վիտամիններ, հանքանյութեր, դեղաբույսեր, ամինաթթուներ և ֆերմենտներ [20]: Կենսաակտիվ հավելումներն այն

արտադրատեսակներն են, որոնք կիրառվում են որպես սննդակարգի հավելում, որպեսզի ապահովեն օրգանիզմը լրացուցիչ օգտակար սննդանյութերով [16]: ԿԱՀ-երը կարող են օգտակար նշանակություն ունենալ օրգանիզմի համար, սակայն դրանք չունեն հաստատված բուժական ազդեցություն [12]:

Չնայած ԿԱՀ-երի լայն սպառմանը՝ առողջության համար դրանց օգտակար լինելու վերաբերյալ առկա են սահմանափակ քանակությամբ ապացույցներ: Բացի դրանից, ԿԱՀ-երը կարող են ունենալ նաև կողմնակի ազդեցություններ, որոնք չեն հետազոտվել: Ինչպես նաև սպառողները մեծամասամբ չեն տեղեկացնում առողջապահական ոլորտի աշխատակիցներին իրենց կողմից ԿԱՀ-երի կիրառման մասին, որն էլ կարող է հանգեցնել դեղի և ԿԱՀ-երի փոխազդեցությունից անցանկալի հետևանքների առաջացման ռիսկի մեծացման [16,18]: Սպառողների կողմից ԿԱՀ-երի ինքնուրույն կիրառման մեծ աճ է նկատվել 2020 թ. COVID-19 համաճարակի տարածման ժամանակ: Այդ ընթացքում սկսվեց հեռուստատեսությամբ և համացանցով որոշ ԿԱՀ-երի կիրառման գովազդը ինչպես COVID-19-ով վարակվելուց պաշտպանվելու, այնպես էլ բուժմանը նպաստելու համար: 2020 թ.-ի մարտ ամսվա մեկ շաբաթվա ընթացքում Elderberry (Վիտամին C, Վիտամին D, Ցինկ) և Ցինկ վիտամինների վաճառքն աճել է համապատասխանաբար՝ 255% և 415%-ով [2,11]:

Հետազոտությունները ցույց են տվել, որ ԱՄՆ-ի չափահաս բնակչության մոտ 60%-ը օգտվում են կենսաակտիվ հավելումներից, որոնցից 46,1%-ը նշել են, որ օգտագործում են ինքնուրույն՝ առանց բժշկի կամ դեղագետի հետ խորհրդակցության [3,6]: Ասիական երկրներում հետազոտությունները ցույց են տվել, որ կենսաակտիվ հավելումներ կիրառում են ճապոնացիների 90%-ը, Հնդկաստանի բնակչության 75%-ը և չինացիների 67%-ը [9]: Ըստ Ռուսաստանի Դաշնության հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնի տվյալների՝ 2021թ.-ի տվյալներով ռուսների 52%-ը կիրառում են կենսաակտիվ հավելումներ [9]:

Սպառողների շրջանում ԿԱՀ-երի մասին գիտելիքների գնահատումը կարող է օգնել ձևավորելու ավելի ճիշտ տեղեկատվական միջոցառումներ, մարդկանց ավելի իրազեկ դարձնելու դրանց մասին և նպաստելու առողջության բարելավմանը [12,13]: Եվրոպայի զարգացած երկրներից Լեհաստանի բնակչության շրջանում հետազոտություն է իրականացվել կենսաակտիվ հավելումների մասին գիտելիքների մակարդակի վերաբերյալ: Հետազոտությանը մասնակցել են բժշկական կրթություն չունեցող անձինք, որոնց 56,2%-ը պարբերաբար են կիրառում, 20,1%-ը՝ ամեն օր, իսկ 23,7%-ը չեն կիրառում ԿԱՀ-եր:

ԿԱՀ-երի մասին գիտելիքների մակարդակը եղել է ցածր, սխալ պատասխանները հիմնականում եղել են արդյունավետության վերաբերյալ [13]: Սպառողների կողմից ԿԱՀ-երի պատշաճ կիրառմանը նպաստելու համար կարևոր է ԿԱՀ-երի վերաբերյալ սպառողների գիտելիքների գնահատումը[12]:

Սույն հետազոտության նպատակն է գնահատել սպառողների շրջանակում ԿԱՀ-երի մասին տեղեկացվածության մակարդակը:

Նյութը և մեթոդները

01.2023 - 06.2023 թթ. սպառողների շրջանում հետազոտությունն իրականացվել է հարցման մեթոդով հարցաթերթիկի միջոցով: Հարցաթերթիկը մշակվել է ԱՀԿ-ի ստանդարտ ուղեցույցների և հարցաշարերի հիման վրա [15]:

Հետազոտական աշխատանքի էթիկական նորմերը պահպանելու համար յուրաքանչյուր մասնակցի ներկայացվել են հետազոտության նպատակը և կարևորությունը: Մասնակցությունը եղել է միայն կամավորության սկզբունքով, հարցումը կատարվել է անանուն, և տվյալների գաղտնիությունը պահվել է հետազոտության ողջ ընթացքում:

Հարցման մասնակիցների քանակը հաշվարկվել է ըստ բանաձևի՝ հաշվի առնելով 2022թ.-ի հոկտեմբեր ամսվա դրությամբ ՀՀ-ում մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշը (ՀՀ-ում մշտական բնակչության թվաքանակը 2 928 914 է), [1,17]: Վստահության աստիճանն ընտրվել է 95%, և սխալի հավանականությունը 5% դիտարկելու դեպքում հարցման մասնակիցների քանակը լինում է 385:

Հարցումն իրականացվել է սպառողներին հասանելի լեզվով՝ հայերեն, և ներառված են եղել միայն փակ հարցեր, պարզ և մատչելի շարադասությամբ: Հարցաթերթիկը կազմված է եղել 32 հարցից, որոնցից 9-ը եղել են սոցիոդեմոգրաֆիկ հարցեր, 8-ը՝ ինքնաբուժման, 11-ը՝ ԿԱՀ-երի մասին տեղեկացվածության և կիրառման, 4-ը՝ գովազդի նկատմամբ սպառողների դիրքորոշման վերաբերյալ:

Հարցմանն ընդգրկվել են 18 տարեկանը լրացած, ՀՀ-ում մշտական բնակություն ունեցող անձինք մարզերից և Երևանից:

Ստացված տվյալները վերլուծվել են SPSS (23,0) ծրագրի միջոցով:

Արդյունքները և քննարկումը

Չնայած անվտանգության, որակի և արդյունավետության վերաբերյալ սահմանափակ հետազոտությունների և ապացույցների առկայությանը՝ ԿԱՀ-երը բոլոր երկրներում մեծ սպառում ունեն: Հետա-

զոտության ընթացքում ուսումնասիրվել են սպառողների կողմից ԿԱՀ-երի կիրառումը և դրանց վերաբերյալ սպառողների տեղեկացվածության մակարդակը:

Սույն հետազոտությանը մասնակցել են ՀՀ 385 չափահաս քաղաքացիներ՝ տարբեր տարիքի և կրթական մակարդակի: Արձագանքման տոկոսը կազմել է 99,2%:

Հարցումն անց է կացվել Երևանի վարչական շրջաններում և ՀՀ բոլոր մարզերում՝ չկրկնվող պատահական ընտրանքի սկզբունքով: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են մասնակիցների դեմոգրաֆիկ տվյալները:

Աղյուսակ

Սպառողների դեմոգրաֆիկ տվյալները

		Արդյունքներ					
Դեմոգրաֆիկ տվյալներ	Տարիքային խումբ	18-25	26-35	36-45	46-55	56-64	>65
		17,4%	36,6%	22,3%	13,8%	6,8%	2,3%
	Սեռ	Իգական			Արական		
		92,5%			6,7%		
	Կրթություն	Միջնակարգ	Միջին մասնագիտ.		Բարձրագույն (բակալավր, մագիստրոս)	Հետբուհական կրթություն	
		11,1%	30,1%		56,3%	1,5%	

Ըստ հետազոտության արդյունքների՝ սպառողների 55,06%-ը ծանոթ էին կենսաակտիվ հավելումներին, իսկ 43,90%-ը ընդհանրապես չէին լսել դրանց մասին (նկար 1):



Նկար 1. Սպառողների տեղեկացվածությունը ԿԱՀ-երի մասին

Սոցիոլոգիական հարցման հաջորդ խնդիրն էր պարզել սպառողների տեղեկացվածության մակարդակը կենսաակտիվ հավելումների վերաբերյալ: Ըստ հետազոտության արդյունքների՝ հարցվածների 47,27%-ը տեղյակ էին, որ ԿԱՀ-երը հավելումներ են սննդին, 31,43%-ը կարծում էին, որ դրանք վիտամիններ են, իսկ 4,42%-ը՝ դեղեր են: Կարևոր է նշել այն փաստը, որ գտնվել էին սպառողներ (3,9%), ովքեր երբևէ չէին լսել և չգիտեին, թե ինչ են կենսաակտիվ հավելումները, իսկ հարցվածների 12,73%-ը չէին ցանկացել պատասխանել տվյալ հարցին: Դա թույլ է տալիս ենթադրել, որ նրանք խուսափել են այդ հարցին պատասխանելուց, քանի որ չունեն բավարար գիտելիքներ և տեղեկություն ԿԱՀ-երի վերաբերյալ (նկար 2):



Նկար 2. Սպառողների գիտելիքները ԿԱՀ-երի մասին

Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել է նաև սպառողների կողմից ԿԱՀ-երի կիրառության մակարդակը ՀՀ-ում: Այսպիսով, մասնակիցների 43,90%-ը նշել էին, որ կյանքի տարբեր ժամանակաշրջաններում կիրառել են տարբեր տեսակի կենսաակտիվ հավելումներ (նկար 3): Ընդ որում կարևոր է նշել, որ նրանց 56,21%-ը նախքան կիրառումը չեն անցել որևէ բժշկական հետազոտություն (նկար 4): Ստացվում է, որ սպառողների գերակշռող մեծամասնությունը կարող են կիրառել ԿԱՀ-երը՝ առանց ախտորոշման և առանց պատկերացնելու դրանց՝ առողջությանը հասցնող իրական վնասները, որն էլ կարող է հետագա առողջական խնդիրների զարգացման պատճառ դառնալ:



Նկար 3. Սպառողների կողմից ԿԱՀ-երի կիրառումը՝ արտահայտված տոկոսներով



Նկար 4. ԿԱՀ-երի կիրառումից առաջ բժշկական հետազոտություն անցնելու տվյալները՝ արտահայտված տոկոսներով

Այս ցուցանիշը հետևանք է այն բանի, որ ՀՀ-ում սպառողների մեծամասնությունը կարծում են, որ իրենց սննդակարգը չի ապահովում բավարար սննդարար նյութեր օրգանիզմի համար, և առանց ախտորոշման, առանց առողջապահական մասնագետների դիմելու կիրառում են կենսաակտիվ հավելումներ: Այնինչ կենսաակտիվ հավելումների նմանօրինակ կիրառումը կարող է հանգեցնել օրգանիզմում դրանց ավելցուկի, որն էլ ունի իր բացասական հետևանքներն օրգանիզմի համար: Մեր հետազոտության արդյունքները նման են Լեհաստանում կատարված հետազոտության արդյունքներին, որտեղ նույնպես սպառողների գերակշիռ մասը կիրառում էր տարբեր տե-

սակի կենսաակտիվ հավելումներ՝ չունենալով անհրաժեշտ գիտելիքներ դրանց վերաբերյալ [13]:

Այսպիսով, հետազոտության արդյունքում պարզ է դառնում, որ սպառողների զգալի մասը կիրառում է կենսաակտիվ հավելումներ՝ առանց նախօրոք անցնելու համապատասխան հետազոտություններ, որը հետևանք է նրանց ոչ բավարար տեղեկացվածության: Այդ բացը լրացնելու նպատակով առողջապահական ոլորտի աշխատակիցների կողմից պետք է իրականացվեն տեղեկատվական միջոցառումներ՝ սպառողներին ներկայացնելու համար կենսաակտիվ հավելումների և դեղերի միջև տարբերությունը, դրանց կիրառումից առաջ հետազոտություններ անցնելու կարևորությունը և առողջության պահպանման մի շարք կարևոր հարցեր: Բացի դրանից, կենսաակտիվ հավելումների որակի, արդյունավետության և անվտանգության վերաբերյալ պահանջներն այնքան խիստ չեն, որքան դեղերինը, ինչպես նաև ԿԱՀ-երի շրջանառությունը չունի բավարար վերահսկողություն, և դրանց ոչ տեղին կիրառումը կարող է վտանգել սպառողի առողջությունը:

Ընդունված է 30.06.23

Осведомленность потребителей о биоактивных добавках

А.В.Назарян, Л.А.Бархударян, Л.Г.Назарян, А.Б.Барсегян, М.Г.Симонян

Потребление биоактивных добавок (БАД) распространено во всем мире, что приводит к многочисленным научным и законодательным проблемам, касающимся их безопасности, качества и эффективности.

Целью данного исследования является оценка уровня осведомленности потребителей о БАД. В Армении был проведен опрос среди 385 взрослых граждан с целью оценки осведомленности потребителей. По результатам исследования 55,06% участников были знакомы с БАД, 43,9% признались, что употребляли их на разных этапах жизни и из них 56,2% без прохождения медицинского обследования. Это исследование выявило значительное число потребителей, которые не осведомлены и используют добавки без надлежащей оценки. Для восполнения этого пробела медицинским работникам необходимо проводить информационные мероприятия по просвещению потребителей о разнице между БАД и лекарствами, необходимости проведения исследований перед их применением и изучить ряд важных вопросов здравоохранения. Кроме того, требования к качеству, эффективности и безопасности БАД не столь строги, как к лекарственным средствам, и оборот БАД недостаточно контролируется, а их нецелевое использование может представлять риск для здоровья потребителя.

Awareness of Consumers on Dietary Supplements

A. V. Nazaryan, L. A. Barkhudaryan, L. G. Nazaryan, A. B. Barseghyan, M. H. Simonyan

The consumption of dietary supplements is prevalent worldwide, leading to numerous scientific and legislative challenges regarding their safety, quality, and effectiveness. The purpose of this study is to assess the level of consumer awareness on bioactive supplements. A survey was conducted among 385 adult citizens in Armenia to gauge consumer awareness. According to the results of the study, 55,06% of the participants were familiar with dietary supplements, 43,9% admitted using them at different stages of life and 56,2% of them didn't undergo any medical examination. This study unveils a significant number of consumers who are ignorant and use supplements without proper evaluation. To bridge this knowledge gap, healthcare professionals have to educate consumers about the distinctions between supplements and medications, emphasize the necessity of medical examinations, and address vital health concerns. Furthermore, regulations pertaining to the quality, efficacy, and safety of dietary supplements are less stringent compared to medications, resulting in inadequate control over their distribution and an increased risk of consumer health hazards.

Գրականություն

1. Արմստատ (ՀՀ վիճակագրական կոմիտե), Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհուրդ: Մարդահամար 2022: Մամուլի հաղորդագրություն, ք. Երևան, 28 ապրիլ, 2023: https://armstat.am/file/doc/99537278.pdf
2. *Adams KK., Baker WL., Sobieraj DM.* Myth Busters: Dietary Supplements and COVID-19. Annals of Pharmacotherapy. 2020; 54(8):820-826. doi:10.1177/1060028020928052.
3. *Anders S., & Schroeter C.* (2017). The impact of nutritional supplement intake on diet behavior and obesity outcomes. PLoS ONE, 12(10). https://doi.org/10.1371/journal.pone.0185258.
4. *Anthony L. Young, James William Woodlee, Michael M. McGuffin* (2018). An Overview of FDA Regulated Products. Chapter 9 Dietary supplements. Publisher: Elsevier https://doi.org/10.1016/B978-0-12-811155-0.00009-0
5. Dietary supplements market size, share & trends analysis report by ingredients (vitamins, minerals), by forms, by application, by end user, distribution channel, by regions, and segment forecasts. 2022–2030. Report ID: 978-1-68038-919-7. Availableat: https://www.grandviewresearch.com/industry-analysis/dietary-supplements-market.
6. *Du M., Luo H., Blumberg J. B., Rogers G., Chen F., Ruan M., Shan Z., Biever E., & Zhang F. F.* (2020). Dietary Supplement Use among Adult Cancer Survivors in the United States. The Journal of nutrition, 150(6), 1499–1508. https://doi.org/10.1093/jn/nxaa040.
7. *Dwyer J. T., Coates P. M., & Smith M. J.* (2018, January 4). Dietary supplements: Regulatory challenges and research resources. Nutrients. MDPI AG. https://doi.org/10.3390/nu10010041.

8. Fortune Business Insights Dietary Supplements Market Size & COVID-19 Impact Analysis, By Type (Vitamins, Minerals, Enzymes, Fatty Acids, Proteins, and Others), Form (Tablets, Capsules, Liquids, and Powders, and Regional Forecasts), 2021–2022. Published January 2022. Availableonline: https://www.fortunebusinessinsights.com/dietary-supplements-market-102082.
9. *Glubokova L. G., Kokhanenko D. V., & Bogdanova M. M.* (2021). Regulating the Market of Food Additives: World and Domestic Experience. In IOP Conference Series: Earth and Environmental Science (V. 670). IOP Publishing Ltd. https://doi.org/10.1088/1755-1315/670/1/012016.
10. *Gorshkova E. D.* (2022). Features of advertising Communication in the Market of biologically active additives. Humanities and Social Sciences. Bulletin of the Financial University, 12(3), 26–29.https://doi.org/10.26794/2226-7867-2022-12-3-26-29.
11. *Grebow J.* Dietary supplement sales skyrocket during coronavirus pandemic. https://www.nutritionaloutlook.com/article/dietary-supplement-sales-skyrocket-during-coronavirus-pandemic.Published April 1, 2020. Accessed April 2, 2020.
12. *Karbownik M. S., Horne R., Paul E., Kowalczyk E., & Szemraj J.* (2021). Determinants of knowledge about dietary supplements among polish internet users: nationwide cross-sectional study. Journal of Medical Internet Research, 23(4).https://doi.org/10.2196/25228.
13. *Karbownik M. S., Paul E., Nowicka M., Nowicka Z., Kowalczyk R. P., Kowalczyk, E., & Pietras T.* (2019). Knowledge about dietary supplements and trust in advertising them: Development and validation of the questionnaires and preliminary results of the association between the constructs. PLoS ONE, 14(6). https://doi.org/10.1371/journal.pone.0218398.
14. *Kennett G.* Time for change: Stepping up the FDA's regulation of dietary supplements to promote consumer safety and awareness. J. Law Health, 2019, 33, 47–78.
15. Pharmacy survey on patient safety culture. Prepared by: Westat, Rockville, MD Martha Franklin, M.A. Joann Sorra, Ph.D. Principal Investigators. AHRQ Publication No. 18-0039-EF Replaces 12(13)-0085 July 2018. http://surl.li/hlqjc.
16. *Ronis M. J. J., Pedersen K. B., & Watt J.* (2018, January 6). Adverse Effects of Nutraceuticals and Dietary Supplements. Annual Review of Pharmacology and Toxicology. Annual Reviews Inc. https://doi.org/10.1146/annurev-pharmtox-010617-052844.
17. Sample Size Calculator. https://www.calculator.net/sample-size-calculator.html?type=1&cl=98&ci=4&pp=50&ps=2928914&x=111&y=17.
18. *Sirico F., Miressi S., Castaldo C., Spera R., Montagnani S., Di Meglio F., & Nurzynska D.* (2018). Habits and beliefs related to food supplements: Results of a survey among Italian students of different education fields and levels. PLoS ONE, 13(1). https://doi.org/10.1371/journal.pone.0191424.
19. *Télessy I. G., Buttar H. S., Wilson D. W., & Okpala C. O. R.* (2023). Dietary supplements could prevent cardiometabolic syndrome: Are they safe and reliable enough for disease prevention and health promotion? Frontiersin cardiovascular medicine, 10, 1091327. https://doi.org/10.3389/fcvm.2023.1091327.
20. United States Food & Drug Administration Dietary Supplement Products & Ingredients. Updated February 2022. Available online: https://www.fda.gov/food/dietary-supplements/dietary-supplement-products-ingredients.